ԳԵՈՐԳ ՍԱՐԳԱՎԱԳ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՆԵՐՄԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ԴԵՍՊԱՆԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՎ ՍԿՍՎԱԾ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԻ ԱՎԱՐՏ

Ուսումնասիրողների մեծ մասը Մերձավոր Արևելքում քրիստոնեական եկեղեցիների միջև ԺԲ դարում եղած բանակցություններն ու հարաբերությունները դիտարկում են Եկեղեցու և դավանանքի պատմության տեսակետից[1], այնինչ՝ դրանց հիմքում ավելի շատ տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական և ընկերային-տնտեսական տեղաշարժերն են: Միջազգային քաղաքական այս պայքարն իր արտացոլումն ու շարունակությունն էր գտնում եկեղեցաքաղաքական ասպարեզում: Այսինքն՝ Հայ, Հույն, Ասորի և Լատին եկեղեցիների միջև փոխադարձ դեսպանագնացությունները, ծիսադավանաբանական հարցերի ակտիվ քննարկումն ու դրա շուրջ պայքարն իրականությունից կտրված գաղափարական երկխոսություններ չէին, այլ նույն այդ իրականության յուրովի արտացոլումն այս ոլորտում:

Հայտնի է, որ Մանուել Կոմնենոս կայսեր մահից հետո (1180 թ.) Ալեքս Բ-ի (Մանուկ) գահակալմամբ (1180-1183) Բյուզանդիայում քաղաքական անկայուն վիճակ ստեղծվեց[2], որը Անդրոնիկոս Ա Կոմնենոսի (Բռնակալ) օրոք (1183-1185) վերածվեց ահաբեկությամբ իշխանությունը պահպանելու մոլուցքի: Բնական է, որ այս շրջանում դիվանագիտական եռանդուն գործունեություն չէր կարող ծավալել: Ողջ այս քաոսի մեջ միակ լուսավոր դեմքը Թեոդոսիոս Բ Բորոդիոտես պատրիարքն է (1179-1183), որի նկատմամբ մեծ հիացմունքով է խոսում Նիկետաս Խոնիատեսը: Չհանդուրժելով ժողովրդի մեջ պատրիարքի ունեցած հեղինակությունն ու կայսեր կամակատարը չդառնալու նրա անզիջում ընթացքը՝ Անդրոնիկոսը փորձում է հեռացնել նրան գահից[3]: Սակայն պատրիարքն ինքն է որոշ ժամանակ անց քաշվում մի կողմ, իսկ Անդրոնիկոսը, հարմար պահը որսալով, իր կամակատար մեկին է նոր

1 Տե՛ս **Ա. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութիւն նոցա ընդ Հռոմէական Եկեղեցւոյ ի Փլորենտեան սինհոդոսի, Վիէննա, 1878: **Ա. Տէր-Մինասեան,** Հայ Եկեղեցին եւ Բիւզանդեան ժողովոց պարագայք, Մոսկուա, 1892: Միջին դարերի կաթողիկոսական ձգտումներն եկեղեցական խաղաղութեան համար, «Արարատ», 1893, էջ 27-48: **Սմբատ եպս. Սասարէթեան**, Ներսէս Լամբրոնացի, Անթիլիաս, 1981: **Լ. Զէքիեան**, Համամիութենական տրամախօսութիւն մը ԺԲ դարուն, «Բազմավէպ», 1977, թ. 3-4, էջ 591-635: **Վ. Վարդանյան,** Գրիգոր Դ Տղա Հայրապետը ժամանակի դավանական եւ քաղաքական խաչուղիներում, «Էջմիածին», 2005, Է-Ը, էջ 85-93: **Г. Микаелян**, История Киликийского армянского государства, Ереван, 1952: **А. Арутюнова-Фиданян**, Византия и Армения в X-XII вв.: Зона контакта, см. Византия между Западом и Востоком, опыт исторической характеристики, СПб, 2001: **Р. Бартикян**, К истории взаимоотношений между Византией и Киликийским армянским государством в конце XII в., (տե՛ս **Հրաչ Մ. Բարթիկյան**, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Բ, Եր., 2002):

2 Տե՛ս **Никита Хониат**, История начинающаяся с царствования Иоанна Комнина, т. I, (1118-1180), СПб., 1860, с.288-291: Այս մանուկ կայսեր օրոք երկրի իշխանությունը գործնականում կենտրոնացած էր պրոտոսեբաստոս Ալեքսի ձեռքում, որից էլ խլում է Անդրոնիկոսը՝ իբր անչափահաս կայսերը խնամակալելու մտահոգությամբ տոգորված ազգական, բայց շատ ջանցած՝ սպանել է տալիս Մանուելի այրիին՝ Քսենիային, եւ որդուն՝ Ալեքս Բ-ին (անդ, էջ 344-350):

3 Պատրիարքից ոչ այդքան սիրալիր ընդունելություն ստանալուն և պատասխան՝ զորքով արդեն Կ. Պոլիս մտնող Անդրոնիկոսը պատրիարքին հանդիպելիս ասում է. «Ահա թաքնված հայը»՝ նկատի ունենալով հոր կողմից նրա հայկական ծագումը (**Никита Хониат**, с.324-326):

պատրիարք դարձնում[4]: Անդրոնիկոս Կոմնենոսի ժամանակ է ողջ կայսրության տարածքով վերսկսվում հայերի հալածանքը: Այս քաղաքականությունը, այն է՝ կայսրության հպատակ հայ հավատացյալներին բռնի քաղկեդոնականություն պարտադրելը, սասրկանում է Իսահակ Անգելոս կայսեր[5] իշխանության տարիներին (1185-1195): Այս մասին պատմում է Վարդանը. «Իսկ ի վերայ Յունաց թագաւորեաց Փիսիկ, որ եւ Սահակ. եւ յարոյց հալածանս եւ չարչարանս հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա»[6]:

Բյուզանդիայում տիրող ընդհանուր քաղաքական քաոսը հուշեց Կիլիկիայի իշխան Ռուբենին (1175-1187) բարելավել հարաբերությունները ֆրանկների հետ խնամիացավ լատիններին[7], ապա հույներից գրավելով Տարսոնը՝ թշնամացավ նրանց հետ:

Մենք մանրամասն չենք խոսի Լամբրոնի Հեթումյանների ու Անտիոքի դուքս Բոհեմունդ Գ-ի հետ Ռուբինյան գահակալի պայքարի մասին[8]՝ անդրադառնալով միայն այս շրջանում Հայոց Կաթողիկոսի եւ Իսահակ Անգելոս կայսեր միջեւ կայացած նամակագրությանը, որի մասին հայագիտության մեջ քիչ է խոսվել: Առաջինն այս մասին Լամբրոնացուն նվիրված իր մենագրության մեջ հիշում է Ն. Ակինյանը՝ ասելով, որ 1180-1185 թթ. ներքին քաղաքական խնդիրներով զբաղված կայսրությունը չէր կարող անդրադառնալ Հռոմկլայի ժողովի որոշումներին[9] եւ «հարցը միւս անգամ ձեռք առաւ Իսահակ Բ Անգեղոս[10] (1185-1195), որ գրեց Հայոց թուղթ մը»[11]՝ նշելով դրա՝ հույն գիտնական Ա. Պապադոպուլոս Կերամեուսի հունարեն հրատարակությունը (Կ. Պոլիս, 1881): Այն փաստին, որ այս նամակագրությամբ վերականգնվել են հայ-բյուզանդական փոխհարաբերությունները, անցած դարի կեսերին անդրադարձել է նաեւ բյուզանդագետ Հ. Բարթիկյանը՝ ծավալուն հոդվածներ նվիրելով Իսահակ Անգելոսի նամակին[12]:

---

4 Անդ, էջ 335:

5 Սմբատ եպս. Սաատեթյանը կարծում է, որ Իսահակ Անգելոս կայսեր դաժանություններն ու հալածանքները հայերի նկատմամբ արդյունք են պաշտոնական մակարդակով հայ-լատին հարաբերությունների սերտացման (տե՛ս **Սմբատ եպս. Սաատէթեան,** Ներսէս Լամբրոնացի, Անթիլիաս, 1981, էջ 76):

6 «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական» ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1861, էջ 175:

7 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 58: **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001, էջ 1735: Այս ամուսնությունից ծնված նրա երկու աղջիկները Ալիսը եւ Ֆիլիպինեն, բավական հայրնի քաղաքական ամուսնություններ ունեցան: Առաջինը Անտիոքի դուքսի հետ ամուսնացավ, իսկ Ֆիլիպինեի ձեռքը խնդրեց Նիկիական կայսրության կայսր Թեոդորոս Լասկարիսը:

8 Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքումն ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեա», Վաղարշապատ, 1893, էջ 140-141: **Միքայէլ Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 141: **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 58-59: **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, էջ 1735: **Կ. Մութաֆյան**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երեւան, 2001, էջ 402:

9 Հռոմկլայի ժողովը Ն. Ակինյանը թվագրում է 1177 թ.: Լամբրոնացուն Ակինյանը հակադրվում է նաեւ նրանով, որ ժողովի որոշումներն ու առաջարկությունները. «հաղորդուեցան թղթով Բիւզանդիոնի արքունիքին եւ պատրիարքին» (Ներսէս Լամբրոնացի, էջ 200), այնինչ ՊԽՄ-ում Լամբրոնացին հայտնում է, որ բանագնացները վերադարձան կես ճանապարհից. «…եւ հասեալ նոցա ի Կեսարիա՝ արգելան վասն խռովութեան ճանապարհի եւ դարձան յետս» (Թուղթ, էջ 201):

10 Ա. Պ. Կաժդանը, հիմք ընդունելով ժամանակակիցների կողմից Իսահակ Անգելոսին «արեւելցի» կոչելը, հավանական է համարում նրա Անգելոս անվան ծագումը հայկական Անգեղ (Անգեղտուն) տեղանունից (**А. П. Каждан**, Армяно-византийские заметки, ՊԲՀ, 1971, թ. 4, էջ 102, 106):

11 **Ն. Ակինեան**, Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի (կյանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց), Վիեննա, 1956, էջ 200:

12 **Հ. Բարթիկյան**, Նոր նյութեր Կիլիկիայի Հայկական պետության եւ Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին. «Բանբեր Մատենադարանի», թ. 4, 1958, էջ 285-295 (Սա հետագայում ավելի լրացված հրատարակվել է «Էջմիածին» (թ. 4, 1967, էջ 181) հանդեսում՝ «Իսահակ Անգեղոս կայսեր

Վարդան Բարձրբերդցին, պատմելով Իսահակի գահակալման եւ հարուցած կրոնական հալածանքների մասին, ավելացնում է. «Վասն որոյ գրէ առ նա աղերսանս պատրիարգն Գրիգոր՝ եղբօրորդի տեառն Ներսեսի եւ Գրիգորի կաթողիկոսացն Հայոց, խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ»[13]: Ուսումնասիրողների մեծ մասը, ծանոթ չլինելով նամակի բովանդակությանը, հիմնվում է պատմիչի այս վկայության վրա միայն եւ կարծում, որ հենց հալածանքները դադարեցնելու նպատակով է Գրիգոր Տղան գրել այս թուղթը[14], այնինչ Իսահակ Անգելոսի պատասխանից երեւում է, որ Գրիգոր Տղայի նամակներից մեկը գրված է հայերեն, իսկ մյուսը՝ արաբերեն: «Այդ երկու նամակով մի բան հայտնեցիր,-գրում է Անգելոսը,- որ վառվում է քո սիրտը մեզ հետ միանալու սիրով, որի համար այնքան ուրախացել ես»[15]: Կայսրը, մեջբերելով Կաթողիկոսի նամակից, գրում է. «... դու քո վրա վերցնում ես այնքան ճանապարհ կտրելով մեզ մոտ գալու հոգնությունը եւ մեզ հետ բանակցությունների մեջ մտնելը՝ ավետելով խաղաղություն ...: Դեռ ավելին: Դու գրել էիր նաեւ, որ եթե նույնիսկ կարող է ճանապարհին հոգնությունից վախճանվես, այդ դեպքում ես չես վարանի կյանքից զրկվելու գնով քեզ ենթակա ժողովրդին փրկել եւ նրան մեզ հետ միացնել, որպես բարի հովիվ»[16]: Հայոց Կաթողիկոսի առաջարկին կայսրը նամակում պատասխանում է. «Միաբանությունը գլուխ բերելու համար թագավորությունս կարծում է, թե շատ ճիգեր չեն պահանջվի եւ դժվարությունների չենք հանդիպի, այլ դա շատ դյուրին եւ հեշտ է, եւ ես ամբողջ հոգով ցանկանում եմ այդ»[17]՝ նշելով, որ «հայրերի սուրբ սյունհոդոսներին կամ սուրբ կանոններին» հակասող սովորությունները հարկ է ուղղել, «պետք է անտեսել անկարեւորները կարեւորների համար, անհրաժեշտ է մի քիչ զիջել, որպեսզի մեծ գործը գլուխ գա»[18]:

Կայսրը նույնպես անդրադառնում է բյուզանդական կայսրության տարածքում եւ հատկապես Փիլիպուպոլսի (այժմ՝ Պլովդիվ) հայերի նկատմամբ իրագործվող վերը հիշված հալածանքներին եւ դրանք դադարեցնելու Կաթողիկոսի խնդրանքին: Այդ հատվածը մեջբերում ենք ամբողջությամբ. «Պատվականությունդ գրեց նաեւ, որ Փիլիպպուպոլսի շրջանում ապրող հայերին իրենց կամքին հակառակ այնտեղի եպիսկոպոսը թագավորությանս հրամանին համաձայն հավատափոխ է անում: Բայց դա այդպես չէ, այդ մասին պատվականությանդ իրականությունը չի հաղորդվել: Ճիշտ է ասված, որ «արքայութիւն երկնից բռնադատի» (Մատթ. ԺԱ 12), սակայն պետք չէ, որ մտնենք այնտեղ (արքայություն) ուրիշների բռնությամբ առաջնորդվելու դեպի նա, այլ անհրաժեշտ է, որ բոլորովին կամավոր կերպով

պատասխան նամակը Հայոց Կաթողիկոս Գրիգոր Տղային» վերնագրով, վերահրատարակվել նույն հեղինակի հոդվածների ժողովածուի մեջ՝ **Հրաչ Մ. Բարթիկյան**, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Եր., 2002, էջ 82): Այս նամակին նա անդրադարձել է ռուսերեն հոդվածով. «К истории взаимоотношений между Византией и Киликийским армянским государством в конце XII в.» (տե՛ս **Հրաչ Մ. Բարթիկյան**, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Բ, Եր., 2002, էջ 21-25):

13 **Վարդան Բարձրբերդցի**, Պատմութիւն Տիեզերական, էջ 175:

14 Մ. Օրմանյանն էլ է կարծում, որ նորընտիր կայսրը հալածանքները վերսկսել է գահակալման հենց սկզբից. «Իսահակ Անգեղոս ալ 1185-ին գահակալելով, բոլորովին տարբեր ուղղութիւն բռնեց, ոչ եւս բանակցելով եւ համաձայնելով, այլ բռնութեամբ եւ ուժգնութեամբ Հայերը քաղկեդոնականութեան հպատակեցնելով» (Ազգապատում, էջ 1734): Այս մասին տե՛ս նաեւ **Վ. Վարդանյան**, Գրիգոր Դ Տղա Հայրապետը ժամանակի դավանական եւ քաղաքական խաչուղիներում. «Էջմիածին», 2005, է-Ը, էջ 87-88:

15 **Հ. Բարթիկյան**, Նոր նյութեր Կիլիկիայի Հայկական պետության եւ Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, էջ 288:

16 Անդ:

17 Անդ, էջ 289:

18 Անդ:

սրիպեն իրենց եւ անցնեն այդ նեղ (ճամբից): Քո պատվականությունը չկարծե, որ բռնությամբ ենք նրանց բերում մեր կողմը: Եթե մեր քարոզչությունը նրանց ձգում է եւ համոզում եւ կամ նրանք սեփական ձգտմամբ անցնում են մեր կողմը, ապա մեզ չի կարելի մեղադրել բռնության մեջ, այլ պետք է նրանց գովել, ովքեր որ նախընտրում են ավելի լավը, եւ ամենից առաջ պետք է երախտագիտություն հայտնենք նրանց ձգողին…: Այսպիսի գործերում մարդկային բռնության համար տեղ չկա: Բայց ինչպե՞ս ես դու անվանում մեր դավանությունը այլ, որին բռնի դարձնում ենք մեզ մոտ ապրող հայերին, երբ մեր հավատքը, ինչպես որ դու ես վկայում, նույնն է»[19]:

Նամակի ընդհանուր ոճը կայսեր բավական պատրաստակամ լինելու մասին է խոսում՝ չնայած որոշ կետեր զիջելու խոսքին զուգահեռ՝ կա նաեւ բյուզանդական արքունիքին հատուկ ինքնամեծար եւ մյուսներից բարձր լինելը շեշտող ոճը: Հայ Եկեղեցին ենթակայության տակ առնելու հեռավոր ակնարկ կա, երբ ասում է. «Տերն այն աստիճան մեծարեց մեզ, որ ամեն օր ժողովուրդներ եւ ազգեր է ենթարկում մեր ոտքերի տակ», իսկ Հայ Եկեղեցուց իրենց բարձր դասելը երեւում է նաեւ հայերի դավանափոխության մասին խոսելիս. «…մեզ չի կարելի մեղադրել բռնության մեջ, այլ պետք է, որ նրանց գովել, ովքեր **նախընտրում են ավելի լավը**[20] (ընդգծումը մերն է - Գ.Ա)»:

Իսահակ Անգելոսի՝ այս նամակագրությունը գործնական բանակցությունների վերածելու մտադրության մասին է փաստում այն հանգամանքը, որ նա նույնիսկ Իկոնիայի եւ Եգիպտոսի սուլթաններին է դիմել, որպեսզի, ինչպես ինքն է հայտնում նամակում, խոչընդոտ չհարուցեն Կ. Պոլիս ճանապարհվող Հայոց Կաթողիկոսին: Կայսրն անգամ իր ներկայացուցչին է ուղարկում, որպեսզի ուղեկցի Գրիգոր Տղային[21]: Թե ինչպիսին եղավ բանակցությունների հետագա ընթացքը, կայսեր պատվիրակ Կոստանդին Ամասիացին հասա՞վ Հռոմկլա եւ որեւէ գործնական տեղաշարժ եղա՞վ այս առումով, պատմական աղբյուրները որեւէ տեղեկություն չեն տալիս:

Ի տարբերություն Շնորհալու օրոք հայ-բյուզանդական բանակցություններում Կ. Պոլսի պատրիարքության գործուն մասնակցությանը՝ այս դեպքում պատրիարքը դերակատարություն չունի: Դա թերեւս կապված էր այն խառնաշփոթ վիճակի հետ, որ ստեղծել էր Իսահակ Անգելոսը՝ իր քմահաճույքով պատրիարքներին գահընկեց անելով ու նորերին նշանակելով: Այս մասին մանրամասն պատմում է ժամանակակից պատմիչ Նիկետաս Խոնիատեսը[22]: Այս հիմքի վրա բնական է Գիգոր Դ Տղայի չվստահելը կայսրին: Իր Եկեղեցին

19 **Ն. Բարթիկյան**, Նոր նյութեր Կիլիկիայի Հայկական պետության եւ Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, էջ 289:

20 Անդ, էջ 289-290:

21 Անդ, էջ 290: Ի տարբերություն սրան նախորդող եւ հաջորդող գրեթե բոլոր հայ-բյուզանդական բանակցությունների՝ այս ընթացքում բացակայում է պատրիարքի նամակի կամ ընդհանրապես մասնակցության մասին որեւէ հիշատակություն:

22 Գահ բարձրանալով՝ Իսահակ Անգելոսն իր հերթին գահընկեց է անում Անդրոնիկոսի դրածո Վասիլի Կամատիրին եւ պատրիարք ընտրել տալիս Նիկետասին, որին շատ շուտով հեռացնում է՝ ծեր եւ անօգուտ կոչելով (**Никита Хониат**, т.2, с.66-67): Նրանից հետո պատրիարք է նշանակում ոմն վանական Լեոնտիոսի՝ երդվելով, որ չէր ճանաչում նրան, եւ Աստվածամայրն է գիշերը ցույց տվել, բայց հազիվ մեկ տարի անց սրան էլ է գահընկեց անում: Եկեղեցական ներքին անկազմակերպության եւ անհետեւողականության մասին է վկայում այն, որ կայսերը հաջողվում է ժամանակի լավագույն օրենսգետ համարվող Անտիոքի Թեոդորոս պատրիարքին համոզել խախտելու եկեղեցական կանոնը (պատրիարքական մի աթոռի գահակալը չէր կարող մյուս աթոռին նստել. կար նաեւ ձեռնադրության ծեսի տարբերություն), խոստանալով

չհարգող գահակալը դժվար թե քրիստոնեական սիրո ու համերաշխության ոգով վերաբերվեր իր դավանանքին չպատկանող եկեղեցուն ու նրա առաջնորդին, եթե քաղաքական իր հաշիվները չունենար՝ օգտագործելու Հայոց կաթողիկոսի հեղինակությունն ի շահ կայսրության նպատակների: Սա ավելի հասկանալի կլինի, եթե հաշվի առնենք Բյուզանդական կայսրությունում առկա ներքաղաքական մշտական լարված ու անկայուն վիճակը եւ օրավուր հզորացող Ռուբինյան իշխանության աճող հեղինակությունը: Սակայն դեպքերն այլ կերպ դասավորվեցին: Պատմիչը հաղորդում է, որ չնայած Գրիգոր Տղայի դիմումին՝ Իսահակ Բ-ն շարունակեց հայերի կրոնական հալածանքները. «Եւ ոչ լուաւ նմա, այլ զյոլովս դարձոյց ի կրօնս իւր եւ զայլ հալածանս արար»[23]:

Իսահակ Անգելոսի՝ Կաթողիկոսին ուղղված պատասխան նամակում մենք տեսնում ենք կայսեր պատրաստակամությունը՝ ընդառաջելու Գրիգոր Տղայի խնդրանքներին ու առաջարկներին: Ուրեմն ինչն է պատճառը, որ նա շարունակում է հայերի հալածանքները: Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, որ Գրիգոր Տղան, կայսեր «դավանական ոտնձգություններին ի հակակշիռ», փորձեց ձեռք բերել Կաթոլիկ Եկեղեցու զորակցությունը՝ Հռոմի Լուկիոս Գ պապի մոտ որպես պատվիրակ ուղարկելով Գրիգոր արքեպիսկոպոսին[24]: Կարելի է ուղղակի կապ տեսնել հայրապետական պատվիրակ Գրիգոր արքեպիսկոպոսի՝ Փիլիպուպոլսի հայոց վանքի[25] առաջնորդ լինելու եւ, ինչպես կայսերը հղած կաթողիկոսական նամակից է երեւում, հենց Փիլիպուպոլսի ու շրջակայքի հայերի նկատմամբ հալածանքներ հարուցելու միջոց: Դրա վկայություն կարելի է դիտել այն, որ Հայրապետի նամակից հետո նույնիսկ կայսեր շարունակած հալածանքները ոչ թե նախորդում, այլ հաջորդում են պապի ու Կաթողիկոսի բանակցություններին: Դեսպանագնաց Գրիգոր արքեպիսկոպոսը Հռոմ է գնացել մինչեւ Իսահակ Անգելոսի գահակալումը՝ Անդրանիկոս Կոմնենոսի իշխանության տարիներին (1183-1185)[26]:

Բնական է մտածել, որ Բյուզանդական կայսրությունում տիրող քաոսի պայմաններում ավելի իրական էր Հռոմի հետ համագործակցությունը: Գրիգոր բանագնացի՝ Փիլիպուպոլսի արքեպիսկոպոս լինելու հանգամանքը հիշատակված է միայն Լուկիոս Գ-ի նամակում[27]:

հենց նրան դարձնել Կ. Պոլսի պատրիարք: Կաշառվելով խոստումից՝ Թեոդորոսը ժողովով փոխում է կանոնը, իսկ Իսահակ կայսրն էլ արդեն փոխված կանոնի հիմքի վրա նոր պատրիարք է օծել տալիս իր թեկնածուին՝ Երուսաղեմի Դոսիթեոս պատրիարքին: Սրան, ինչպես Խոնիատեսն է վկայում, բոլորն ատում էին եսասիրության եւ կայսեր կամակատարը լինելու համար եւ նույնիսկ հոգեւորականները փորձում են գահընկեց անել, բայց կայսրը զենքի ուժով թելադրում է իր կամքը (**Никита Хониат**, т.2, ñ. 67-70):

23 **Վարդան Բարձրբերդեցի**, Պատմութիւն Տիեզերական, էջ 175:

24 Տես **Վ. Վարդանյան**, Գրիգոր Դ Տղա Հայրապետը ժամանակի դավանական եւ քաղաքական խաչուղիներում, էջ 88: Տես նաեւ **Գ. Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ-ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 501:

25 Կայսրության հասարակական-քաղաքական կյանքում Փիլիպուպոլսի շրջանի հայ համայնքի եռանդուն մասնակցության ապացույց է այն, որ Մանուել Կոմնենոս կայսրը Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի հետ բանակցություններում կայսերական պատվիրակության մեջ ընդգրկել էր նաեւ Փիլիպուպոլսի հայկական վաքի վանահայր Հովհաննես Ութմանին (հուն.՝ Աթմանոս): Նրա անձի, գործունեության եւ հայ-բյուզանդական բանակցություններում ունեցած դերի մասին մանրամասն տես **Ն. Բարթիկյան**, Փիլիպուպոլսի հայկական վանքի վանահայր Հովհաննես Ութմանի դերը հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններում Ներսես Շնորհալի Կաթողիկոսի օրոք (1166-1173). «Էջմիածին», 1985, Է, էջ 24-32, նաեւ **Ա. Բոզոյան**, Հայ -բյուզանդական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Եր., 1995:

26 Տես **Ա. Բոզոյան**, Վավերագրեր, էջ 217:

27 Տես ՄՄ- 1026, թղ. 175բ (հղումն՝ ըստ Ա. Բոզոյանի հիշյալ գրքի 38 ծնթ-ի, էջ 217):

Դա է պատճառը, որ հիմնական թիրախը դառնում են պապի մոտ դեսպան գնացած Գրիգոր արքեպիսկոպոսի առաջնորդության տակ եղող Փիլիպուպոլոսի շրջանի հայերը[28]:

Պատահական չէ պատմիչի հիշած հրամանը, որ պապն արձակում է Գերմանիայի, Ֆրանսիայի եւ Անգլիայի թագավորների ու առաջնորդ եպիսկոպոսների առջեւ. «Հայոց պատրիարգն յայնկոյս ծովու իշխանութիւն կալցի ի վերայ Հայոց եւ Յունաց եւ ամենայն ազգաց քրիստոնէից մեք յայսմ կողմանէ երկնաւոր եւ երկրաւոր բանալեօք»[29]: Արեւելքի քրիստոնեական ճամբարում Հայոց Եկեղեցուն գերագահ եւ առաջատար դիրք վերապահելու պապի այս քայլը բացահայտ հարված էր Բյուզանդիայի քաղաքական եւ հոգեւոր հեղինակությանը: Դա պետք է արձագանք գտներ կայսրության քաղաքականության մեջ[30]:

1187 թ. իսլամի ներհավատքային վեճերը հարթած եւ մուսուլմաններին մի դրոշի տակ հավաքած Սալահ ադ-Դինը գրավում է Արեւելքում հիմնված խաչակրաց իշխանությունների ողնաշարը հանդիսացող Երուսաղեմը՝ գերի վերցնելով Երուսաղեմի թագավորին եւ մեծաթիվ իշխանավոր դուքսերի: Հալեպի ամիրայության կողմից 1140-ականներին Եդեսիայի կոմսության կործանումը Եվրոպայում առաջ բերեց խաչակրության նոր ալիք, որը, սակայն, էական ոչ մի փոփոխություն չմտցրեց Մերձավոր Արեւելքի եւ մասնավորապես Միջերկրականի արեւելյան ափերի պետությունների քաղաքական քարտեզի մեջ: Եգիպտոսի սուլթանի կողմից 88 տարի քրիստոնյաներին պատկանած Սուրբ քաղաքի գրավումը խաչակրաց նոր՝ երրորդ արշավանքի պատճառ դարձավ, արշավանք, որ ամենահզորն ու մեծաքանակն էր եղածների մեջ եւ հայտնի է «արքաների խաչակրություն» անունով: Այն գլխավորում էր Գերմանիայի (Հռոմեական սրբազան կայսրություն) կայսր Ֆրիդրիխ Բարբարոսան՝ ուղեկից ունենալով Անգլիայի Ռիչարդ Առյուծասիրտ եւ Ֆրանսիայի Ֆիլիպ Օգոստոս արքաներին:

Հոռոմ մեկնած վերոհիշյալ պատվիրակության նկատմամբ պապի չափից ավելի խանդավառ վերաբերմունքը կապված էր պապական աթոռի՝ Գ խաչակրության նախաշեմին Հայոց Եկեղեցու եւ Ռուբինյան հզոր իշխանապետության աջակցությունը ձեռք բերելու, Արեւելքում ունեցած ակնկալիքների ու քաղաքական ծրագրերի հետ: Դրանից ելնելով է պապական աթոռի նոր գահակալ Կղեմես Գ-ն (1187-1191) մինչեւ խաչակիր բանակների Կիլիկիա հասնելը հատուկ նամակներ ուղարկում Գրիգոր Դ Հայրապետին եւ Լեւոն իշխանին՝ խնդրելով հնարավորինս չափ օգնել Սուրբ Երկիրն ազատագրելու եկողներին[31]:

---

28 Հարկ է նշել, որ դավանական հողի վրա իրագործվող հալածանքների հետեւանքով հայերը բռնությամբ կամ կամավոր ընդունում էին քաղկեդոնականություն: Գաղտնիք չէ, որ հիշյալ շրջանից էլ առաջ բավական մեծ թվով հայեր կային բյուզանդական հոգեորականների կազմում: ԺԱ դարում, օրինակ, հենց Փիլիպուպոլսում հիմնվել էր հայ-վրացական քաղկեդոնական վանք, որի հիմնադիրն էր Գրիգոր Բակուրիանը (այս մասին տե՛ս Վ. Ա. Հարությունովայի «Գրիգոր Պակուրիանը (Բակուրյանը) եւ Պետրիծոնում վանք հիմնելու նրա նպատակները» հոդվածը «Մառը եւ հայագիտության հարցերը» գրքում, Եր., 1968, էջ 167-192:

29 **Վարդան Բարձրբերդեցի**, Պատմութիւն Տիեզերական, էջ 176: Օրմանյանը մտացածին է համարում այս խոսքերը (**Մատաթիա արք. Օրմանեան**, Ազգապատում, էջ 1738-1739):

30 Պատմիչը տալիս է նաեւ հոգեորականության վերաբերյալ տվյալներ. «ուր կային երեք աթոռ եպիսկոպոսութեանն եւ հազար վեց հարիւր քահանաք, զորս ի մի հաւաքեալ՝ բռնադատէր» (տե՛ս **Վարդան Բարձրբերդեցի**, էջ 175), ինչից կարելի է գոնե մոտավոր պատկերացում կազմել կայսրության տարածքում ապրող հայերի թվի մասին:

31 Մ. Չամչյանը մասամբ մեջբերում է նամակը (հ. Գ, էջ 155-156): Տե՛ս նաեւ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 446: **А. Анниский,** ук.соч., էջ 210:

Դեռեւս Լուկիոս Գ պապը ծիսական մի քանի հարցեր էր առաջադրել[32], իսկ Կղեմես Գ-ն որեւէ պայման չի դրել՝ խնդրելով ուղղակի աջակցել խաչակիրներին: Լուկիոս պապն իր ջերմ վերաբերմունքով փորձել էր ստեղծել դրա նախադրյալը[33]: Կաթողիկոսի եւ պապի միջեւ քաղաքական եւ կրոնական բանակցությունները հույների շրջանում այն կարծիքն էին ձեւավորել, որ հայերը գերմանացիների հետ «փոխադարձաբար համաձայն են բազմաթիվ հերետիկոսական ուսմունքներում»[34]: Սակայն իրականությունն այն է, որ հույների կողմից տեւականորեն կրոնական հալածանքների ենթարկված հայերի համար խաչակիրների գալուստն իսկապես ուրախալի էր, ինչի մասին էլ հիշում է բյուզանդացի պատմիչ Նիկետաս Խոնիատեսը. «Իրականում միայն հայերն էին գերմանացիների գալուստը ոչ թե ազգերի ներխուժում, այլ բարեկամների այց համարում»[35]: Հայերի ջերմ վերաբերմունքի մասին վկայում է նաեւ արշավանքների ուղեկից գերմանացի պատմիչը[36] :

Հույների նենգ մարտավարությանը ծանոթ Ֆրիդրիխ կայսեր սոված բանակի համար իսկապես փրկության ափ էր Կիլիկիան[37]: Կիլիկիայի հայոց հոգեւոր եւ աշխարհիկ գահակալների համար այնքան էլ դյուրին չէր թիկունքում Սալահ ադ-Դինի պես հզոր մեկին ունենալով՝ բացահայտ ընդառաջ գնալ խաչակիրներին: Նրանք ստիպված էին դիվանագիտական ճկուն խաղ խաղալ՝ նրանցից որեւէ մեկի զոհը չդառնալու համար: Հատկանշական է Գրիգոր Տղայի քաղաքականությունը. նա բարեկամական նամակներ է գրում եւ՛ Ֆրիդրիխ կայսերը, եւ՛ Սալահ ադ-Դին սուլթանին[38]: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ չնայած Կաթողիկոսն ու Ռուբինյան իշխանը գործում էին ներքին համաձայնությամբ, ուրիշների հետ, սակայն, հանդես էին գալիս առանձին-առանձին, քանի որ շատ դեպքերում Ռուբինյան իշխանի համար վտանգավոր քայլը կարող էր շատ դյուրին լինել Հայոց Հայրապետի համար: Եղած փվյալները հաճախ այն եզրահանգմանն են բերում, որ թե՛ Գերմանիայի Ֆրիդրիխ կայսեր, եւ թե՛ Եգիպտոսի սուլթան Սալահ ադ-Դինի մոտ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ավելի հեղինակություն էր վայելում, քան Կիլիկիայի իշխանապետը: Չնայած Լեւոնին գրած իր նամակներին՝ Ֆրիդրիխ Բարբարոսան Գրիգոր Տղային ուղղված նամակում ասում է. «Ահա ունիմ թագ եւ զգեստ, զի օծցես թագաւոր Հայոց զով որ ընտրես»[39]՝ գահի թեկնածու առաջադրելու իրավունքը թողնելով Կաթողիկոսին[40]: Իսկ արաբ պատմիչը

32 Դրանց մասին տես **Մ. Չամչեանց,** հ. Գ, էջ 143-145, նաեւ **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, էջ 1737-1738:

33 Տես **Г. Микаелян**, ук., соч., с.25.:Քաղաքական շահերով առաջնորդվող պապի համար արշավանքին օգտակար լինելու պարագայում հայերը դավանական ու ծիսական որեւէշեղում չունեն եւ նրանց կաթողիկոս Գրիգոր Դ Տղան «որպէս ճշմարիտ քրիստոնեայ» է մեծարվում պապի նամակում (տես **Ա. Տէր-Մինասեան**, Միջին դարերի կաթողիկոսական ձգտումներն եկեղեցական խաղաղութեան համար, էջ 143):

34 1189 թ. Փիլիպուպոլսի կառավարիչ նշանակված Նիկետաս Խոնիատես պատմիչը նկարագրում է խաչակրաց բանակների մուտքը Փիլիպուպոլիս՝ նշելով, որ բնակիչները փախել էին քաղաքից եւ «եթե որեւէ մեկն էլ մնացել էր, ապա կամ աղքատ էր, որի ունեցվածքը իր հագուստն էր, կամ էլ հայ էր» (**Никита Хониат**, с.25):

35 **Никита Хониат**, с.25.

36 Տես **Ա. Բոզոյան**, Վավերագրեր, էջ 219:

37 Ֆրիդրիխ Շիկամորուսն իր հերթին արդեն երեք նամակ էր ուղարկել Լեւոն Բ-ին՝ իր բանակին աջակցելու համար: Տես նաեւ **Ա. Анниский,** ук.соч., с.210:

38 Դրա մասին մանրամասն խոսում են Կ. Մութաֆյանը (նշվ. աշխ. էջ 152-154) եւ Վ. Վարդանյանը (Գրիգոր Դ Տղա Հայրապետը ժամանակի դավանական եւ քաղաքական խաչուղիներում, էջ 89-90):

39 **Վարդան Բարձրբերդեցի,** Պատմութիւն Տիեզերական, էջ 179:

40 Այստեղ կարեւոր է նշել Հայոց կաթողիկոսության քաղաքական այն մեծ դերը, որ կատարում էր նա իշխանապետությունը հզորացնելու եւ թագավորության վերածելու ուղղությամբ: Վստահ կարող ենք ասել, որ Ֆրիդրիխ Շիկամորուսի այս խոսքերը պապահական չէին, այլ հերեւանք էին Գրիգոր Դ-ի նամակների

Սալահ ադ-Դինին նամակ գրած Հայոց Կաթողիկոսին կոչում է այսպես. «Հայաստանի պետը՝ Կալաթ ար-Ռումի տերը, ապահովված լինելով այդ ամուր դղյակի մեջ, շրջապատված Եփրատի հարկատու բնակչությամբ՝ սուլթանին ուղղեց մի նամակ՝ լի խորհուրդներով ու հոգածությամբ, որի մեջ նա ցույց է տալիս մուսուլման երկրների նկատմամբ իր մտադրությունը՝ վերհանելով արշավող բանակի ուժը եւ նրա դեմ գնացող բանակների թուլությունը»[41]: Թերեւս «Հայաստանի պետ» կոչելու հիմք տալիս է այն, որ Հայոց Հայրապետի հոգեւոր իշխանության ներքո էին գտնվում ոչ միայն Կիլիկիայի, այլեւ նրան հարակից տարածքների ու բուն Հայաստանի բոլոր հայերը:

Հարկ է նշել, որ Հայոց կաթողիկոսարանի միջազգային հեղինակության բարձրացման ամենաաչքի ընկնող շրջանը հենց ԺԲ դարն է՝ Գրիգոր Գ Պահլավունու, Ներսես Շնորհալու եւ Գրիգոր Դ Տղայի կաթողիկոսության տարիները: Վերջինիս մահից հետո Կիլիկիայի թագավորներն ամեն կերպ ձգտում են Կաթողիկոսարանը իրենց ազդեցությանը ենթարկել, ինչի ապացույցն են Գրիգոր Ե Քարավեժի (1193-1194), Գրիգոր Զ Ապիրատի (1195-1203) եւ մյուսների ընտրություն-նշանակումները[42]:

Ստեղծված քաղաքական խառնաշփոթի մեջ Ռուբինյան գահակալ Լեւոն Բ իշխանը փորձում է հնարավոր միջոցներով իր երկրի համար օգտակար դարձնել իրավիճակը՝ պապից ու Գերմանիայի կայսրից թագ ստանալու խոստում կորզելով: Ինչպես հայտնի է, մահմեդական աշխարհին ահ ու սարսափ ներշնչած այս ռազմաքշավը չհասավ իր նպատակին: Արաբ մատենագիրը, ի տարբերություն Ֆրիդրիխ կայսեր մահվան մասին պատմող գրեթե բոլոր պատմիչների, խոսում է ոչ թե խեղդվելու, այլ հիվանդությամբ մահանալու մասին. «…փափագ ունեցավ լողանալ սառը ջրի մեջ, որը եւ կատարեց, բայց ջրից դուրս գալուց հետո, Աստծու կամքով, նրա վրա ծանր հիվանդություն եկավ ջրի սառնության հետեւանքով ու մի քանի օր տառապելուց հետո մեռավ»[43]: Կալիկադնոսի ջրերում խեղդված առաջնորդի փոխարեն գահակալներից ոչ ոք չկարողացավ համախմբել խաչակիր ուժերին, որոնց առանձին-առանձին գործելու արդյունքում ձեռքբերումն այնքան էլ մեծ չեղավ, եթե չհաշվենք անգլիական Ռիչարդ Առյուծասիրտ թագավորի կողմից Աքքայի գրավումն ու առանց Երուսաղեմ քաղաքի Երուսաղեմի թագավորության պահպանումը: Հռոմեական սրբազան կայսրության գահակալի մահվամբ հետաձգվեց նաեւ Լեւոնի թագ ստանալը[44]:

ազդեցության:

41 Տե՛ս **Ալ-Կադի Բահաէդդին իբն Շադդադ**, Այյուբյան Սալահադդինի կենսագրությունը, Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, կազմեց՝ Հ. Թ. Նալբանդյան, Երեւան, 1965, էջ 302: Ալիշանը կասկածի տակ է դնում Գրիգոր Տղայի նամակ գրելը Սալահ ադ-Դինին («Սիսուան», էջ 447):

42 Տե՛ս **Մ. Չամչեանց**, հ. Գ, էջ 159-188: **Մ. Օրմանեան,** Ազգապատում, հ. Ա, էջ 1751-1870:

43 Տե՛ս **Ալ-Կադի Բահաէդդին իբն Շադդադ**, էջ 296: Սա, ըստ իբն Շադդադի, ասվում է Հայոց Կաթողիկոսի նամակում (նամակը տե՛ս էջ 294-297): Կայսեր մահվան պատմությունը քիչ անց պատմիչը համառոտ վերապատմում է (էջ 297):

44 Թագադրության հետաձգման քաղաքական ու դիվանագիտական պատճառները տես՝ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 463: Իսկ Գերմանիայի կայսեր խոստումով Լեւոնը «արդեն իրաւամբ եւ բարոյապէս թագաւորեալ էր», ինչպես կարծում է Ղ. Ալիշանը եւ զարմանալի չի համարում 1194-ին Լամբրոնացու կողմից (ի նկատի ունի «Թուղթ առ Լեւոն»-Գ. Ա.) թագավոր կոչվելը: Մ. Օրմանյանն էլ նույն կարծիքն է հայտնում. «Լեւոն արդէն իբր թագաւոր ընդունուած էր իրեւներէն, եւ այնպէս ալ կը ճանչցուէր օտարներէն» (**Մաղաքիա ար. Օրմանեան,** Ազգապատում, հ. Ա, էջ 1785): Գրիգոր Սկեւռացին էլ Լամբրոնացու Կոստանդնուպոլիս գնալը ներկայացնում է որպես «ըստ թագաւորական հզօր հրամանի» (տե՛ս **Ղ. Ալիշան,** Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 424, հմմտ. **Գ.Բ. Նակոբյան**, Ներսես Լամբրոնացի, Երեւան, 1971, էջ 80-81):